ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 52-85-11 (406), ՖԱՔՍ (374-10) 525563

« 09 » նոյեմբերի 2023 թ.

№ ԱՍ/34.2-Մ2-7/4246-2023

Անհատ ձեռնարկատեր
Գագիկ Բարսեղյանին

Հարգելի պարոն Բարսեղյան,

Ձեզ են ուղարկվում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 8-ի «Անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին նախազգուշացնելու մասին» №385-Ա և «Անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին տուգանելու մասին» №387-Ա որոշումների պատճենները:

09.11.2023

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Ա. Օհանյան ☎ 52- 85- 61 (127)

600.0385.08.11.23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 նոյեմբերի 2023 թվականի №385-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱԳԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը մինչև 2022 թվականի հուլիսի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան հաշվետվությունը, սակայն չի ներկայացրել, որի արդյունքում Հանձնաժողովն իր 2022 թվականի նոյեմբերի 16-ի №447-Ա որոշմամբ, որն անբողոքարկելի է դարձել 2023 թվականի փետրվարի 27-ին, անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին նախազգուշացրել է և պարտավորեցրել որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2022 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը,

բ) Որոշման համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը մինչև 2023 թվականի հունվարի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան 2022 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն), սակայն չի ներկայացրել,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը 2023 թվականի հուլիսի 13-ին անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 13-ի №ԳԲ/34.2-Մ2-7/2341-2023 գրությամբ,

դ) անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

ե) Որոշման համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը մինչև 2023 թվականի հուլիսի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 և №6 հավելվածներով հաստատված ձևերին համապատասխան 2023 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունները, սակայն չի ներկայացրել,

զ) Որոշմամբ սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը 2023 թվականի օգոստոսի 8-ին անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ և նկատի ունենալով, որ վերջինիս նկատմամբ 2023 թվականի հուլիսի 13-ին և օգոստոսի 8-ին հարուցված վարույթների համատեղ իրականացումը կարող էր ապահովել ավելի արագ և արդյունավետ լուծում, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթները միացվել են, որի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ ևս դիրքորոշում չի ներկայացրել,

է) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ միևնույն անձի մասնակցությամբ վարույթների միացման դեպքում տուգանք կիրառելիս կիրառվում է կարգավորվող անձի թույլ տված խախտումների համար նախատեսված տուգանքներից առավել խիստ տուգանքի առավելագույն չափը, և այն պարագայում, երբ նույն մասով նախատեսված պատասխանատվության կիրառումն առավել անբարենպաստ է խախտում կատարած անձի համար, քան եթե այն կլիներ վարույթների առանձին իրականացման պարագայում, Հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի №ԳԲ/34.2-Մ2-9/4097-2023 գրությամբ միացված վարույթներն առանձնացվել են,

ը) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը խախտել է Հաշվետվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 35-րդ հոդվածի 1-ին մասը ՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջի խախտման համար անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին նախազգուշացնել:

2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2022 թվականի 2-րդ կիսամյակի Հաշվետվությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱԳՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
8 նոյեմբերի 2023թ.

600.0387.08.11.23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 նոյեմբերի 2023 թվականի №387-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱԳԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը մինչև 2022 թվականի հուլիսի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան հաշվետվությունը, սակայն չի ներկայացրել, որի արդյունքում Հանձնաժողովն իր 2022 թվականի նոյեմբերի 16-ի №447-Ա որոշմամբ, որն անբողոքարկելի է դարձել 2023 թվականի փետրվարի 27-ին, անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին նախազգուշացրել է և պարտավորեցրել որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2022 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը,

բ) Որոշման համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը մինչև 2023 թվականի հունվարի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան 2022 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունը, սակայն չի ներկայացրել, ինչպես նաև Որոշման համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը մինչև 2023 թվականի հուլիսի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ Որոշման №2 և №6 հավելվածներով հաստատված ձևերին համապատասխան 2023 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունները (այսուհետ՝ Հաշվետվություններ), սակայն չի ներկայացրել,

գ) Որոշմամբ սահմանված պահանջների չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը 2023 թվականի հուլիսի 13-ին և օգոստոսի 8-ին անհատ

ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանի նկատմամբ հարուցել է վարչական վարույթներ, որոնց վերաբերյալ վերջինս ծանուցվել է համապատասխանաբար՝ Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 13-ի №ԳԲ/34.2-Մ2-7/2341-2023 և օգոստոսի 8-ի №ԳԲ/34.2-Մ2-7/2800-2023 գրություններով,

դ) անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանի նկատմամբ 2023 թվականի հուլիսի 13-ին և օգոստոսի 8-ին հարուցված վարույթների համատեղ իրականացումը կարող է ապահովել ավելի արագ և արդյունավետ լուծում, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթները միացվել են,

ե) անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը վարչական վարույթների շրջանակում քննարկվող հարցերի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

զ) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ միևնույն անձի մասնակցությամբ վարույթների միացման դեպքում տուգանք կիրառելիս կիրառվում է կարգավորվող անձի թույլ տված խախտումների համար նախատեսված տուգանքներից առավել խիստ տուգանքի առավելագույն չափը, և այն պարագայում, երբ նույն մասով նախատեսված պատասխանատվության կիրառումն առավել անբարենպաստ է խախտում կատարած անձի համար, քան եթե այն կլիներ վարույթների առանձին իրականացման պարագայում, Հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի №ԳԲ/34.2-Մ2-9/4097-2023 գրությամբ միացված վարույթներն առանձնացվել են,

է) իրականացված վարչական վարույթների շրջանակում փաստվել է, որ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջները,

ը) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանի կողմից, Հանձնաժողովի իրավական ակտով սահմանված պահանջը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի (թույլտվության) պայմանների կոպիտ խախտման կամ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող այլ անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի (թույլտվության) պայմանների չկատարմանը, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի

դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 35-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջների խախտման համար անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին տուգանել 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով:
2. Անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին պարտավորեցնել՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2023 թվականի 1-ին կիսամյակի Հաշվետվությունները.
   2) մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով ամրագրված գումարը №900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գագիկ Բարսեղյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ք. Երևան
8 նոյեմբերի 2023թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ԱՍ/34.2-Մ2-7/4246-2023պ/տ

Հարկը
գանձված է
Tax percu

LO112100924AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ
RETURN
CN15

- [ ] Անհայտ/ Unknown
- [ ] Տեղափոխված/ Gone away
- [ ] Թերի հասցե/ Insufficient address
- [ ] Մերժված / Refused
- [x] Չի պահանջվել/ Unclaimed
- [ ]

Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date 12 12 23

Ա/Ձ Գագիկ Բարսեղյա
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ք. Երևան, Դավթաշեն 4 թ., 2

Տրման նշանակման օպերատոր / Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

Առաքանու հասցեատեր/ Addressee of the item: Ա/Ձ Գագիկ Բարսեղյանին ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ք. Երևան, Դավթաշեն 4 թ., 2Բ-21

A.R. Ծառայողական/ On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/ On postal service

Առաքանու բնույթը/Nature of the item

- [ ] Առաջնային նամակ/ Priority letter
- [ ] Հրատարակչություն/ Printed paper
- [ ] Ծանրոց/ Parcel
- [ ] Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

Առաջնային/Priority
Օդային/By airmail

- [ ] Պատվիրված/Registered
- [ ] Վկայագրված հանձնում/ Recorded delivery
- [ ] Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO112100924AM

- [ ] Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order
- [ ] Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
- [ ] Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Վերադարձնել / Return to

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

- [ ] հանձնվել է/ delivered
- [ ] վճարվել է/ paid
- [ ] գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

AL0112100924AM

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ ԱՍ/34.2-Մ2-7/4246-2023պ/տ
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

YEREVAN
0002
14 DEC 2023

YEREVAN
0054
10 NOV 2023

YEREVAN
0000
14 DEC 2023


YEREVAN
0054
10 NOV 2023